ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/3959-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Կ-981-05.12.2024-ՏՀ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագծերը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծերում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքները՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում ենք «2.1-րդ» բառը փոխարինել «2.1-ին» բառով, ինչպես նաև 5-րդ հոդվածի համարակալումը վերանայել:

2. «Վիճակախաղերի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածով նախատեսվել է «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «խաղային գործունեության ոլորտում կառավարության քաղաքականությունը մշակող մարմին» բառերով, մինչդեռ 2-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսվել է, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքով լիազոր մարմին հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված և ընթացիկ վարչական վարույթներն իրականացվում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, իսկ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո հարուցված վարչական վարույթներն իրականացվելու են սույն օրենքով սահմանված կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից: Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում կիրառվող վերոնշյալ ձևակերպումներն

անհրաժեշտ է համապատասխանեցնել միմյանց:

Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի նույնանման կարգավորումներին:

Նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է վերանայել:

Նույն դիտարկումը վերաբերում է «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի մասերի համարակալմանը:

Բացի այդ, նույն հոդվածի 7-րդ մասի «ՀՀ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:

Նույն դիտարկումը վերաբերում է ««Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում և ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 10-րդ մասում կիրառված նույնանման բառերին:

3. «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում կիրառված «կառավարության լիազորած» բառերն առաջարկում ենք վերանայել՝ նկատի ունենալով նախագծի 1-ին հոդվածով ««Խաղային գործունեության կարգավորման մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-263-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետում նախատեսված փոփոխությունը:

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ